ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/7831-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի փետրվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 196 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-770-31.01.2024-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) նպատակը, ըստ նախագծի ընդունման հիմնավորման, ներկայումս միայն մայրաքաղաքային սփռում ունեցող՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Առաջին լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի հեռարձակումն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված տեղեկատվության համաձայն՝ մայրաքաղաքային սփռման գծով հեռարձակման տարեկան ծախսը կազմում է 18.0 մլն դրամ, իսկ հանրապետական սփռման գծով՝ 72.0 մլն դրամ: Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեից կհանգեցնի 64.8 մլն դրամ (ներառյալ ԱԱՀ-ի գումարը) լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության, սակայն ինչպես ՀՀ 2024 թ. պետական բյուջեով, այնպես էլ ՀՀ 2024-2026 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով այդ նպատակով միջոցներ նախատեսված չեն: Կառավարությունը չի առարկում նախագծի ընդունմանը, եթե «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Առաջին լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի հեռարձակումը հանրապետության ողջ տարածքով իրականացվի ՓԲԸ-ին տրամադրվող ընդհանուր բյուջետային հատկացումների շրջանակում՝ առանց լրացուցիչ միջոցների հատկացման:

2. Անդրադառնալով նախագծի ընդունման հիմնավորմանը՝ հարկ ենք համա-րում նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «(…) օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: (…) Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնա-կությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ

մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

Նախագծի հիմնավորմամբ հետապնդվող նպատակը հասկանալի և ընդու-նելի է, սակայն հարկ ենք համարում նշել, որ նախագծի ընդունումը չի ամրագրում նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված «Առաջին լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի երաշխավորված հեռարձակումը Հայաստանի Հանրա-պետության ողջ տարածքում:

3. Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պա-հանջները՝ նախագծի 2-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Անցումային դրույթներ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերով.

2) 1-ին մասում «պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվա-նից» բառերով.

3) 2-րդ մասում «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ» բառերով:

Ամփոփելով վերոնշյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծի ընդունման հիմնավորումը և նրանով հետապնդվող նպատակի օրենսդրական կարգավորումը վերանայման ու հստակեցման կարիք ունեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 196 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱՓԻՑ ՋԵԿՈՒՅՑՈՒ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Միսիթար Հայրապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-770-31.01.2024-ԳԽ-01/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.02.2024
ՀԱՅԱՍՏԱՆԻ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-770-31.01.2024-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «միայն մեկ ծրագիր» բառերը փոխարինել «առավելագունը երկու ծրագիր» բառերով:

Հոդված 2. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից?

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին սլոթի օգտագործման համապատասխան լիցենզիա ունեցող Հանրային հեռարձակողին մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթը 30 օրվա ընթացում փոխարինվում է հանրապետական սփռում ապահովող սլոթով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագիրը ունի միայն մայրաքաղաքային սփռում, մինչդեռ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի բյուջեի հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է, ուստի նպատակահարմար է, որպեսզի ծրագիրը հասանելի լինի ՀՀ ողջ տարածքում: